ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2022 թվականի N 198-Ա

ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը և 42-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել «Տեսալսողական մեդիայի ոլորտում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների վարքագծի կանոնների վերաբերյալ» ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հունիսի 1
Երևան

Հավելված
Մրցակցության պաշտպանության
հանձնաժողովի
2022 թվականի մայիսի 24-ի
N *-Ա որոշման**

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Մրցակցության պաշտպանության օրենսդրության նպատակը տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության և բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումն է: Նշվածի հաշվառմամբ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է ոչ թե մրցակցությունը խաթարող կամ սահմանափակող գործունեության համար պատասխանատվության միջոց կիրառելու, այլ նախ և առաջ այն բացառելու անհրաժեշտությամբ:

2. Հանձնաժողովը 2020 թվականից ի վեր մի շարք վարույթների շրջանակներում պարբերաբար անդրադարձ է կատարել դիստրիբյուտորների կողմից տեսալսողական ծրագրերի տարածման իրավունքի տրամադրման շրջանակներում ցանցային օպերատորների հետ պայմանագրային հարաբերությունների շուրջ ծագած խնդիրներին, այդ թվում՝ գնագոյացման մեխանիզմներին և խտրական պայմանների կիրառմանը: Այս կապակցությամբ Հանձնաժողովը շարունակաբար հորդորել է բացառել նման գործունեությունը:

3. Չնայած ծրագրերի դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների շարունակաբար իրականացվող համագործակցությանը՝ այնուամենայնիվ դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ պարբերաբար հաղորդումներ են ներկայացվում Հանձնաժողով:

4. Հաղորդումների քննարկման, ինչպես նաև հարուցված վարույթների իրականացման փուլում, օրինակ՝ քննարկելով գնագոյացման հետ կապված հարցերը, Հանձնաժողովը հաճախ ստանում էր տեղեկատվություն, որ վերահեռարձակման իրավունքի ձեռքբերման գնի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ցանցային օպերատորների բաժանորդների քանակը, որը հավաքագրելիս, սակայն, դիստրիբյուտորներն, ըստ էության, չունեն որևէ հնարավորություն ստուգելու այդ տեղեկատվության արժանահավատությունը:

5. Նման պայմաններում Հանձնաժողովը ևս իր լիազորություններն իրականացնելիս և օրինակ՝ սահմանված գների խտրականության հարցը քննարկելիս, հիմք է ընդունում ցանցային օպերատորների կողմից ներկայացված բաժանորդների քանակի վերաբերյալ տվյալները՝ ծախսելով մեծ ռեսուրսներ տեղեկատվության արժանահավատության ստուգման համար:

6. Նման պայմաններում Հանձնաժողովը զրկված է լինում տնտեսավարող սուբյեկտների, տվյալ դեպքում՝ դիստրիբյուտորներին և ցանցային օպերատորներին հնարավորին պաշտպանելու հնարավորությունից:

7. Վերոգրյալի հաշվառմամբ անհրաժեշտություն է առաջացել գործարկել Հանձնաժողովի կանխարգելիչ լիազորությունը և նախաձեռնել է սույն ուղեցույցի մշակման աշխատանքները, որը նպատակ ունի.

1) առավել որոշակի և կանխատեսելի դարձնել դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների վարքագիծը.

2) ապահովել դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների գործողությունների շրջանակում առկա խնդիրների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների համար անհրաժեշտ ապացուցողական լրացուցիչ մեխանիզմներ.

3) կանխել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով նախատեսված իրավախախտումները:

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8. Սույն ուղեցույցով ներկայացվում են տեսալսողական մեդիայի ոլորտում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների վարքագծի կանոնների, մասնավորապես՝ Ծրագրերի տարածման իրավունքի տրամադրման շրջանակում վարվող գնային քաղաքականության և պայմանագրային դրույթների հետ կապված հարաբերությունները:

9. Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Ծրագիր՝** տեսալսողական ծրագիր, որը ներառում է հեռարձակողի նախապես կարգավորած հաջորդականությամբ տեսալսողական նյութերը.

2) **Դիստրիբյուտոր՝** «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքին համապատասխան՝ ցանցային օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

3) **Ցանցային օպերատոր՝** «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքին համապատասխան՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային

սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

4) **Բաժանորդ՝** ցանկացած անձ, ով ընդունում (դիտում կամ լսում) է հեռարձակողի տեղեկատվությունը.

5) **Պայմաններ՝** դիստրիբյուտորների կողմից մշակվող՝ ծրագրերի տարածման իրավունքի տրամադրման նպատակով կնքվելիք պայմանագրերի էական պայմաններ.

6) **Չափանիշներ՝** Ծրագրերի դիստրիբյուտորների կողմից վարվող գնային քաղաքականության չափանիշներն ու սկզբունքները, որոնցով սահմանվում են յուրաքանչյուր ծրագրի կամ ծրագրերի փաթեթի դեպքում գնագոյացման հստակ մեխանիզմները[1] և ծրագիրը կամ ծրագրերի փաթեթը տրամադրելու պայմանները[2].

7) **Օրենք՝** «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենք.

8) Ուղեցույցում կիրառվող այլ հասկացությունները և տերմինները կիրառվում են Օրենքով և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված իմաստով:

ԳԼՈՒԽ 2
ԾՐԱԳՐԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐԻ ԲԱՐԵԽԻՂՁ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

10. Ծրագրերի դիստրիբյուտորները, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահանջները պահպանելու նպատակով, մշակում և հրապարակում են իրենց կողմից ցանցային օպերատորներին Ծրագրերի տարածման իրավունքի տրամադրման նպատակով կնքվելիք պայմանագրերի Պայմաններ և վարվող գնային քաղաքականության Չափանիշները:

11. Ցանցային օպերատորները հրապարակում են Ծրագրերի վերահեռարձակման ծառայություններից օգտվող բոլոր բաժանորդների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

12. Դիստրիբյուտորների կողմից մշակված Պայմաններն ու Չափանիշները պետք է լինեն միասնական և ոչ խտրական:

13. Պայմաններում ու Չափանիշներում փոփոխություններ կատարելու դեպքում դրանք կիրառվում են նաև ցանցային մյուս օպերատորների հետ պայմանագրային հարաբերությունների շրջանակում:

14. Դիստրիբյուտորներն ազատ են ընտրելու գնագոյացման ցանկացած միասնական և ոչ խտրական մեխանիզմ: Ծրագրերի դիստրիբյուտորների կողմից որպես գնագոյացման մեխանիզմ բաժանորդների քանակով հաշվարկն իրականացնելու պարագայում հիմք է ընդունվում ցանցային օպերատորների կողմից հրապարակված Ծրագրերի

---

[1] Որպես մեխանիզմ կարող է դիտարկվել, օրինակ, գինը բաժանորդների քանակով որոշելը:

[2] Օրինակ՝ X Ծրագիրը կամ Ծրագրերի փաթեթը տրամադրվում է մեկ բաժանորդի հաշվով՝ Y արժեքով, կամ 1-500 բաժանորդի դեպքում՝ Y արժեքով, 501-1000 բաժանորդի դեպքում՝ Z արժեքով և այլն:

վերահեռարձակման ծառայություններից օգտվող բոլոր բաժանորդների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը:

15. Ցանցային օպերատորի կողմից վերահեռարձակվող Ծրագրերի տարբեր փաթեթներում ընդգրկված բաժանորդների քանակների վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելու դեպքում դիստրիբյուտորն իրավունք ունի պայմանագրի գնի հաշվարկն իրականացնել նաև ներկայացված փաթեթների բաժանորդների քանակով այն դեպքում, երբ ինքն էլ իր հերթին հրապարակում է այն Պայմաններն ու Չափանիշները (օրինակ՝ ցանցային օպերատորների որոշակի տեղեկատվական աղբյուրներին հասանելիություն պահանջելու կամ այլ տարբերակով), որոնց միջոցով ստուգելու և հավաստի է համարելու ներկայացված տեղեկատվությունը:

16. Այն դեպքում, երբ համագործակցության շրջանակում դիստրիբյուտորը համաձայնության է գալիս Ծրագրերը տրամադրել ցանցային օպերատորի կոնկրետ փաթեթի բաժանորդների համար՝ գնագոյացման հաշվարկն իրականացնելով տվյալ փաթեթի բաժանորդների քանակի հաշվառմամբ, ապա վերջինս տվյալ Ծրագրերի տրամադրման շրջանակում պետք է նույն մեխանիզմով աշխատի մյուս բոլոր ցանցային օպերատորների հետ՝ վերջիններիս կողմից նման առաջարկ ստանալու դեպքում:

ԳԼՈՒԽ 3
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

17. Դիստրիբյուտորները տնտեսական մրցակցության օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու նպատակով պաշտոնական կայքէջում, իսկ դրա բացակայության դեպքում՝ հայտարարությունների տեղադրման կայքերում[3] յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 15-ը ներառյալ, իսկ սույն Ուղեցույցի ընդունումից հետո առաջին անգամ հրապարակելու դեպքում մինչև 2022 թվականի հունիսի 15-ը հրապարակում են տեղեկատվություն Պայմանների և Չափանիշների վերաբերյալ՝ դրանց հրապարակման կայքի մասին տեղեկացնելով իրենց դիմած ցանցային օպերատորներին:

18. Ցանցային օպերատորից դիստրիբյուտորի կողմից հրապարակված Պայմաններից և Չափանիշներից տարբերվող Պայմանների և Չափանիշների վերաբերյալ առաջարկ ստանալու, ընդունելու և կիրառելու պարագայում դիստրիբյուտորը հրապարակված Պայմաններն ու Չափանիշները փոփոխում է՝ համապատասխանեցնելով նոր ընդունված Պայմաններին և Չափանիշներին:

---

[3] Դիստրիբյուտորները, ցանկության դեպքում, ազատ են Պայմանների և Չափանիշների մասին տեղեկատվությունը հրապարակելու ինչպես պաշտոնական, այնպես էլ հայտարարությունների տեղադրման կայքերում:

19. Փոփոխված Պայմաններն ու Չափանիշները հրապարակվում են նույն կայքում, որում հրապարակվել են դրանց սկզբնական տարբերակները, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ցանցային օպերատորների համար հասանելի այլընտրանքային տարբերակում:

20. Ցանցային օպերատորները տնտեսական մրցակցության օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու նպատակով պաշտոնական կայքէջում, իսկ դրա բացակայության դեպքում՝ հայտարարությունների տեղադրման կայքերում[4] յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 15-ը ներառյալ, իսկ սույն Ուղեցույցի ընդունումից հետո առաջին անգամ հրապարակելու դեպքում մինչև 2022 թվականի հունիսի 15-ը հրապարակում են տեղեկատվություն իրենց կողմից մատուցվող տեսալսողական ծրագրերի վերահեռարձակման ծառայություններից օգտվող բոլոր բաժանորդների քանակի վերաբերյալ՝ դրա հրապարակման կայքի մասին տեղեկացնելով տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներին:

21. Այն ցանցային օպերատորները, որոնք նախատեսում են դիստրիբյուտորների հետ համագործակցել հիմք ընդունելով իրենց կողմից վերահեռարձակվող Ծրագրերի տարբեր փաթեթներում ընդգրկված բաժանորդների քանակը, պետք է նույն ժամկետում հրապարակեն տեղեկատվություն նաև այդ մասով՝ նշելով յուրաքանչյուր փաթեթի անվանումը (փաթեթի անվանումը պետք է հստակ նույնականացվի ցանցային օպերատորի կողմից սպառողների առաջարկվող փաթեթի հետ) և տվյալ փաթեթում ընդգրկված բաժանորդների քանակը:

22. Տարվա ընթացքում ցանցային օպերատորների կողմից մատուցվող տեսալսողական ծրագրերի վերահեռարձակման ծառայություններից օգտվող բոլոր բաժանորդների քանակի, իսկ փաթեթներով բաժանորդների քանակը հրապարակելու դեպքում նաև յուրաքանչյուր փաթեթից օգտվող բաժանորդների քանակի 5 տոկոս և ավելի փոփոխության դեպքում, հրապարակված տեղեկատվությունը պետք է համապատասխանեցվի փոփոխությանը[5]:

ԳԼՈՒԽ 4
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

23. Հանձնաժողովը ցանցային օպերատորի կողմից սույն ուղեցույցում բարձրացվող հարցերի վերաբերյալ հաղորդում ստանալու դեպքում, վարույթ հարուցելու հարցը քննարկելիս հաշվի է առնում վերջինիս կողմից Ծրագրերի վերահեռարձակման ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի մասին տեղեկատվությունը հրապարակած լինելու հանգամանքը:

---

[4] Ցանցային օպերատորները, ցանկության դեպքում, ազատ են բաժանորդների քանակի մասին տեղեկատվությունը հրապարակելու ինչպես պաշտոնական, այնպես էլ հայտարարությունների տեղադրման կայքերում:

[5] Ցանցային օպերատորները, ցանկության դեպքում, ազատ են բաժանորդների քանակի ցանկացած փոփոխության դեպքում թարմացնելու տեղեկատվությունը պաշտոնական (և) կամ հայտարարությունների տեղադրման կայքերում, իսկ 5 տոկոս և ավելի փոփոխության դեպքում հրապարակված տեղեկատվությունը ենթակա է պարտադիր փոփոխության:

24. Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթների շրջանակներում Հանձնաժողովը դիստրիբյուտորների կողմից Պայմանների և Չափանիշների՝ սահմանված կարգով չհրապարակելը կարող է դիտարկել որպես իրավախախտման փաստը հաստատող լրացուցիչ ապացույց:

25. 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Ծրագրերի դիստրիբյուտորների և ցանցային օպերատորների միջև կնքված և գործող պայմանագրերը վերանայվում և համապատասխանեցվում են վերջիններիս կողմից համապատասխանաբար հրապարակված Չափանիշներին, Պայմաններին և բաժանորդների քանակին մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: